«Հնդկաստանի Փունա ֆադաթն Ուլիշը մ. Կաֆֆին կը հեռագրէ ամերիկեան թերթերուն... Մայիս 1 թուականով, որ հնդկական շարժանկարի ծարարունեսին մէջ ներկայիս կը փայլի թուխ Աստղիկ մը (a brown Venus), որ Հնդկաստան ծնած հայուհի մըն է, Սամիթա Տեվի անունով: ...Ամենէն ժողովրդական դերասանուհիներէն մէկը բնաւ հնդիկ չէ, այլ հայուհի մը՝ ծնած Հնդկաստանի մէջ: Ան կը կոչուի Սամիթա Տեվի եւ կը բնակի իր մօրը հետ Պոմբէյ, ուր կը շինուի հնդկական շարժանկարներու երկու երրորդը: Այս աղջիկը հարկադրուեցաւ սորվիլ Հինդուսթանի լեզուն՝ նախ քան շարժանկարի մէջ երեւիլը: Հիմա, սակայն, այնչափ լաւ կը խօսի այդ լեզուն, որ հանդիսականներէն փչեղծ գիտեն անոր հնդիկ չըլլալը, ինչպէս կ'ըսէ ինքը՝ Սամիթա Տեվին: Հայուհին բանաստեղծութիւն կը գրէ իր դարձուածներուն եւ ունի խոսքեր սեւ շերտ, զորս կը գործածէ համբոյրներ թելադրելու շարժանկարի կեսին վրայ: ...Ան կը կրէ հիմնու կարմիր բիծն իր ճակատին վրայ եւ սովորական հնդիկ



հագուստով է (սարիս), երբ նկարաբեմի վրայ կ'երեւի, սակայն երբ կը մեկնի շարժանկարի սթուիոներէն՝ կը հագուի արեւմտեան հագուստներ»:

Մեզ հաջողվեց զսնել Վիլյամ Մաք-Գաֆֆինի նշած հոդվածը՝ վերնագրված «Հնդկաստանի ֆիլմերի շարժանկարը շատ ուղղափոխ է», որը հրատարակվել է «Բիրմինգհեմ Նյուզ» հանդեսում (1943, մայիսի 2, էջ 63):

Ժամանակի ամերիկյան այլ թերթերում եւս բազմաթիվ անդրադարձներ կան Սաբիտա Դեվիի հայկական ծագման մասին, սակայն դերասանուհու Վիֆիոմեդիայի էջում նշված է, որ նա իբր հրեական ծագում ունի՝ Այրիս Մոդ Գասպեր իրական անունով:

Հարցը դարձելու նույնպես դիմեցի **Լիզ Չաթրիին**՝ հնդկահայերի ծագումնաբանության մեր օրերի լավագույն մասնագետին, հարցնելով, թե ինչպե՞ս է այս դերասանուհու հնարավոր հայկական ծագման մասին: Չա-

թրի առաջին դասախոսանքը (29 հոկտեմբերի, 2023) հետևյալն էր. «Ես անձամբ լսած չկայի Սաբիտա Դեվիի մասին: Այնուամենայնիվ, հենց նոր այնքանից նրա Վիֆիոմեդիայի էջը, ինչպես նաեւ այլ կայքեր ու հրատարակումներ եւ փնտրեցի նրա ծննդյան անունը: Եթե նա իսկապես կոչվում էր Այրիս Մոդ Գասպեր, ապա կարող եմ ասել, որ ես տեղյակ եմ նրա հոր՝ **Փերի Գասպերի** եւ նրա ընտանիքի ու ժառանգների մասին: Ըստ իմ արձանագրությունների՝ թեւեւ նրա ընտանիքը հայ էր, բայց Այրիս Մոդը մկրտվել է ոչ թե Կալկաթայի հայկական եկեղեցում, այլ Ֆորթ Վիլյամի Հին եկեղեցում: Նրա հայրը մկրտվել է Կալկաթայի հայկական եկեղեցում: Այստիպով, իմ եզրակացությունը սա է. եթե Այրիս Մոդ Գասպերն իսկապես Սաբիտա Դեվին էր, նա ունի ոչ թե հրեական, այլ հայկական ծագում»: Մի ֆանի ռոմեո անց Լիզ Չաթրը գրեց հետևյալը. «Ես գա Սաբիտայի ծննդյան եւ մկրտության արձանագրությունը: Նա ծնվել է 1912 թվականի նոյեմբերի 20-ին, Կալկաթայում, Փերի Գասպերի եւ նրա կնոջ՝ Մոդի ընտանիքում: Փերին եղել է տղազրիչ: Այրիսը մկրտվել է Կալկաթայի Թոբոլոն մեթոդիսական եկեղեցում 1912 թ. դեկտեմբերի 1-ին»: Երբ Լիզ Չաթրին հարցրի, որ միզուցե դերասանուհու մայրն է եղել հրեա, եւ այդպիսով հրեական ավանդույթի համաձայն նույն ազգությունն էլ վերագրել են դստերը, Լիզը դասախոսեց. «Տեղյակ չեմ նրա մոր մասին, դա որոշ ժամանակ կդադարանայ: Բայց շատ փչ հավանական եմ համարում, որ մայրը հրեա եղած լինի: Եթե Փերին անունացել է Կալկաթայում, ապա մայրը եղած կլինի հավանաբար անգլուհի կամ բնիկ կալկաթուհի: Նախկինում ինձ հանդիպել են Հնդկաստանի հայերին հրեա անվանելու իրողություններ, հիմնականում հնդիկների կողմից, որոնք սովորաբար տեղյակ չեն Հնդկաստանում հայ համայնքից, եւ ըստ իրենց

իմացածի՝ հայը դարձել են հրեա»: Հավելեմք, որ Սաբիտա Դեվիի հայրը՝ Փերի Օսթոն Գասպերը, մահացել է 1938 թվականի նոյեմբերին, Բոմբեյում, ինչից հետո նրա կինը դարձել է դստեր մենեջեր-ուղեկցողը: Սաբիտան ունեցել է մեկ եղբայր եւ մեկ փոքր: Նախադաս աշխատել է Կալկաթայի «Բրիթիշ Գոմինիոն ֆիլմս» ընկերությունում: Տեղափոխվելով Բոմբեյ՝ հիմնականում հանդես է եկել Սագար Մովիթի արտադրած ֆիլմերում, որոնց մեծ մասում խաղընկեր է ունեցել հնդիկ հանրահայտ դերասան Մոթիլալ Ռաջվանչին: Նրանց համատեղ ֆիլմերից հայտնի են «Դոկտոր «Մադուրիկան» (1935), «Արծաթե արհամ» (1935) եւ «Զուլվադիուն» (1937): Սաբիտա Դեվին եղել է երրորդ ամենաբարձր վարձատրվող դերասանուհի Սուլթանաբայից (Ռուբի Մայեր) եւ Գոհարից հետո՝ ամսական ստանալով 3000 ռուբլի աշխատավարձ: Այնպիսի ճանաչված գրողների, ինչպիսիք էին Կ. Մ. Մունժին եւ Ռամանյալ Վասանթլալը, հանձնարարել են սցենարներ գրել նրա ֆիլմերի համար, իսկ ժամանակի լավագույն բեմադրիչներից մեկը, որի հետ Սաբիտան աշխատել է սոցիալական ժանրի կինոնկարներում, եղել է Սարվոթթան Բադամին: 1935-1943 թվականներին Սաբիտան նկարահանվել է Բադամիի 15 ֆիլմերում: Հավանաբար հայկական ձեռնարկաշիջական ոգու շնորհիվ Սաբիտան հիմնել է նաեւ իր սեփական արտադրական ընկերությունը՝ «Սուդամա փիլմզ»՝ Սարվոթթան Բադամիի համագործակցությամբ: 1951 թվականին Այրիս Մոդ Գասպեր-Սաբիտա Դեվին Բոմբեյում ամուսնացել է ֆինիկոս Դեյվիդ Թեթֆոր Լյուիսի հետ եւ տեղափոխվել է Միացյալ Թագավորություն, որտեղ ապրել է իր կյանքի մնացած մասը: Ինչպես մեզ հաղորդել է Լիզ Չաթրը՝ Սաբիտա Դեվին մահացել է 1998 թվականի դեկտեմբերի 31-ին Բիթթոնի (Նոթինգհեմ) Սիվերվուդ ծերանոցում...

## «Հայաստանը եւ Բյուզանդիան առանց սահմանների»

«Բրիլ» հրատարակչությունը վերջերս լույս է ընծայել «Հայերեն բնագրեր եւ ուսումնասիրություններ» մասնագրքի 7-րդ հատորը՝ «Հայաստանը եւ Բյուզանդիան առանց սահմանների. Կարճատևություն, փոխազդեցություն, դասախոսություններ» վերնագրով (խմբագիրներ՝ **Էմիլիո Բոնֆիլիո, Կլաուդիա Ռաֆ**): «Ժամանակի ընթացքում Բյուզանդիան ավելի ու ավելի է ճանաչվում որպես հարեան սահմանափակների, ֆաղափական միավորների եւ ժողովուրդների հետ երկխոսության կենտրոնական մասեր: Որտեղ է հնարավոր փնտրել նման դիմամիզմ, ֆան բյուզանդացիների եւ հայերի փոխազդեցության մեջ: Պատերազմն ու դիվանագիտությունն այդ դասնության միայն մի մասն են: Առավել ճշգրիտ մասը բաղկացած է շփումից եւ փոխադարձ ազդեցությունից, որը միջնորդվում է անհասների կողմից, որոնք սիրաբանում էին ինչպես մասնակցներ-

ին, այնպես էլ լեզուներին»,- կարդում ենք գրքի ծանուցման մեջ: Հաստատվում է ընդհանրապես սերունդների բազմազգ գիտնականների նոր աշխատություններ, որոնք ներկայացնում են գրականության, նյութական մշակույթի եւ կրոնի ոլորտներում հայ-բյուզանդական փոխազդեցության զանազան ձևեր: Հոդվածների հեղինակներն են **Գերթ Բոստան, Էմիլիո Բոնֆիլիոն, Բեռնար Զուլին, Կարեն Համադան, Ռոբին Մեյերը, Յոհաննես Փրայգեր-Կաթելլերը, Կլաուդիա Ռաֆը, Մարկ Ռուզիենը, Վեռներ Չայթը, Էմանուել վան Էլվերդինգեն, Թեո Մարթեն վան Լինթթը, Ալեքսանդրա-Կիրիակի Վասիլիու-Չայթը** եւ **Դավիթ Չաֆարյանը**: Էմիլիո Բոնֆիլիոն (ծնված 1980-ին, Պալերմոյում, Սիցիլիա) 2011-ին արեւելագիտության թեկնածուի կոչում է ստացել Օֆոֆորդի համալսարանում: Համբուրգի համալսարանի գիտաբան-

սող է եւ Հայագիտության միջազգային ընկերակցության ղեկավար հանձնախմբի անդամ: Հետազոտությունները վերաբերում են ֆրիսոնտության դասնությանը Արեւելյան Միջերկրածովյան շրջանում, Կովկասում եւ Բյուզանդիայում ու անհիկ եւ միջնադարյան ժամանակաշրջաններում, հայագիտությանը, ինչպես նաեւ Բյուզանդիայում եւ ֆրիսոնյա Արեւելյան Հովհան Ոսկեբերանի երկերի խմբագրություններին եւ ընդունելությանը: Կլաուդիա Ռաֆը (ծնված 1961-ին) գերմանացի բյուզանդագետ է, Վիեննայի համալսարանի բյուզանդագիտության դոկտոր եւ Ավստրիայի գիտությունների ակադեմիայի միջնադարյան հետազոտությունների ինստիտուտի սնորհակալ: Ղեկավարել է մի շարք միջազգային հետազոտական նախագծեր եւ հրատարակել է ուսումնասիրություններ ու անհիկ դարաշրջանի եւ Բյուզանդական կայսրության մշակութային, սո-

Armenia and Byzantium without Borders  
Mobility, Interactions, Responses  
Edited by EMILIO BONFIGLIO AND CLAUDIA RAPP  
BRILL  
ցիալական եւ կրոնական դասնության վերաբերյալ: Ա. Բ.

# Ֆրանսահայ նկարիչ Լեոն Թյությունջյանի կտավները Նյու Յորքի Ռոզենբերգ դասկերասրահում



Տեղեկանալով, որ Նյու Յորքի Մեդիսոն դոկտորատում գործող Ռոզենբերգ հեղինակավոր դասկերասրահը դասրասվում է Եվրոպայում արքայական Էստրադայի հիմնադրամի ֆայլում ներկայացուցչներից մեկի՝ ֆրանսահայ նկարիչ **Լեոն Արթուրի Թյությունջյանի** (1905-1968) կտավների ցուցահանդեսը կազմակերպել, ՉԲԸՄ-ի կենտրոնական գրասենյակի արվեստի բաժնի «Հասուկ միջոցառումների հանձնախմբի» (NYSEC) աշխատակիցները անմիջական կապ են ստեղծել 108 սարի առաջ Հայոց ցեղասպանությունից մազադուրծ նկարչին նվիրված ցուցահանդեսի եւ արցախահայության բռնի սեղանահանության միջոց եւ, գործի անցնելով, համագործակցության եզրեր են գտել դասկերասրահի սնտեմոնյան հես, գրում է «Արմինյն Միոռ-Սփեթեյթ» շաբաթաթերթը:

Նոյեմբերի 8-ին Ռոզենբերգի երկհարկանի դասկերասրահի շքեղ սարածում տեղի է ունեցել Կանդիսկու, Կլիփ, Կալդերի եւ ման սաղանդավոր նկարիչների շարքին դասվող փարիզաբնակ Լեոն Թյությունջյանի կտավների հասուկ դիտումը՝ ՉԲԸՄ-ի անձնակազմի համար:

Միջոցառման ընթացքում խոսք են առել ՉԲԸՄ-ի արվեստի բաժնի սնտեմ **Հայկ Արսենյանը** եւ դասկերասրահի սեփականատեր **Մարիան Ռոզենբերգը**, որի նախնիները Փարիզում Պիկասոյի, Մասիսի եւ Լեժեի ման մոդեռնիստներին են ներկայացրել հանրությանը: Տիկին Ռոզենբերգի մեծ հայրը, նացիստական ռեժիմից մազադուրծ, կարողացել էր երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպայից Մ. Նահանգներ տեղափոխել իրենց ընտանիքի կուրատորական գործունեությունը: Այդտեղից էլ զուգահեռներ կարելի էր անցկացնել նրա դատի եւ Թյությունջյանի միջոց, որ Ցեղասպանությունից փրկված որք լինելով, հասել էր անհավանական թվացող փառքի:

Ելույթ է ունեցել նաեւ ֆրանսահայ կուրատոր եւ արվեստի դասնության մասնագետ **Շողակաթ Գազարյանը**, որ հակիրճ ներկայացրել է Թյությունջյանին որպես արքայական նկարչության ռաիվիայի Եվրոպայում: Գազարյանը ավելի մանրամասն զեկուցումով հանդես է եկել դասկերասրահում նաեւ դեկտեմբերի 6-ին: Նշվել է, որ հակառակ Եվրոպայի արվեստներ հասարակության կողմից լավ ճանաչված լինելուն, Մ. Նահանգներում Թյությունջյանը շատ էջերին է հայտնի, եւ ցուցահանդեսը այդ առումով թեւ ուժացած, բայց տեղին է եւ ըստ արժանավայն է ներկայացված եղել, շնորհիվ սերս համագործակցությանը Ռոզենբերգ դասկերասրահի, Փարիզի Թյությունջյանի հիմնադրամի, ՉԲԸՄ-ի արվեստի բաժնի եւ հասկապես Հասուկ միջոցառումների հանձնախմբի միջոց, որոնցից յուրաքանչյուրն իր լուծման է ներդրել բարեգործական միջոցառման իրականացմանը:

Փակման խոսքով ելույթ է ունեցել ՉԲԸՄ-ի կենտրոնական վարչության անդամ **Հայ Արեյանը**, որ հավասով է ներժնչել ներկաներին, որ Հայաստանը ներկա փորձությունն էլ կկարողանա հաղթահարել:

Լեոն Արթուրի Թյությունջյանը ծնվել է Ամասիայում (Օսմանյան Թուրքիա) 1905-ին, համեմատաբար ունեւոր եւ մտավորական ընտանիքում: Հայրն ու դադող դասասուներ են եղել: Ինքը սովորել է լավ դորոցներում եւ երազել է տեղափոխվել Փարիզ: Ընտանիքը հաճախ է բնակության վայրը փոխել՝ ուսուցչական դասուներ որոնելու նդասակով: Լեոնի կյանքը կրուկ Երջարաճ է կրել 1915-ին՝ արյան ուղեղային զեղումից հոր վաղաժամ մահ:



վանից հետո: Մայրը սիտված է եղել վաճառել ընտանիքի ունեցվածքը՝ երեխաների ադուրուսը հոգալու համար: Այդուհանդերձ Լեոնը հնարավորություն է ունեցել հաճախելու Կոնստանդնուպոլսի Բերբերյան եւ Կերոնական վարժարաները, որոնցում մի ժամանակ դասավանդել էր հայրը: 1921-22-ին մայրը ուրիշ որբացած երեխաների հես Լեոնին նավով ուղարկել է Հունաստան: Որդին բաժանումը ծանր է տարել եւ այդուհետ ասել է մավով ճանադարհորդելը: 1923-ին կարճ ժամանակով մնացել է Սբ. Ղազար կղզում, որտեղ ուսումնասիրել է հայկական մանրանկարչությունը: 1924-ին ժամանել է Փարիզ եւ ուսումը Եարունակել «Ecole des Beaux-Arts» գեղարվեստի ուսումնարանում: Ամուսնացել է ֆրանսուհու հետ, 1933-ին: Փարիզում հաստատվելուց երկու տարի անց մասնակցել է սյուրռեալիստների դասկերասրահի բացման ցուցահանդեսին: Երեք տարի անց իր կտավներն է ցուցադրել «Galerie des Editions Bonaparte» դասկերասրահում: Ստեղծել է տարբեր ոճերի ավելի քան հազար նկար: 1930-ին ճանաչված արքայական նկարիչներ **Թեո ֆոն Դուզբուրգի, ժան Դելիոնի** եւ **Օսոն Կառլսունդի** համագործակցությամբ հիմնել է «Art Concret» (Կոնկրետ արվեստ) խումբը: 1933-ից 1960 թվականը նկարել է հիմնականում սյուրռեալիստական ոճով, իսկ 1960-ից մինչեւ իր մահը՝ 1968-ին նա վերադարձել է արքայական նկարչությանը: Երկրորդ աշխարհամարտի իրարածություններն ու «Վիչի» ֆաշիստական վարչակարգի ստեղծումը մեծադեպ ազդել են նրա հոգեվիճակի վրա: Ստեղծված քանոսային դայմաններից սակայն նա կարողացել է ել գտնել՝ ադալիներով իր արվեստին: Իր «Ճանաչիր եւ սիրիր» շարքի 4-րդ Արիլ Գորկու ծննդյան 110-ամյակին նվիրված դասկերագրում (Երեւան, 2011 թ., Փրինթինֆո) լուսահոգի

Շահեն իսչասրյանը գրում է. «Ահաբեկող դասերազմին զուգահեռ՝ Ցեղասպանությունից փրկված, որբանոցներում մեծացած, ադա եվրոպական ակադեմիաներում ուսանած մի Եարք հայ նկարիչներ հետեւեցին սյուրռեալիզմին՝ իրենց որոնումներում մնալով մանկության հոգեսանջ օրերին կադված: ...Նման նկարիչներից առաջինը Ֆրանսիայում ստեղծագործած Լեոն Թյությունջյանն էր: Նրա կտավներում ծառը, կրված ձեռքը,




դարանը, ճեղված ուռը ընկալվում են իրեն անմոռաց ճամարություններ, իրեն մանկության դաժան օրերի հալեւացում» (էջ 17):

Ռոզենբերգ դասկերասրահում Թյությունջյանի ցուցահանդեսը բաց է լինելու մինչեւ դեկտեմբերի 22-ը:

Պատասխե՛ք՝ ՏԱԿՈՒ ՕՈՒՆԻՅԱՆԸ

## Անգլերեն նոր ժողովածու հայ սփյուռքի մասին



Բրիտանա-ամերիկյան «Հայերը ժամանակակից եւ վաղ արդի աշխարհում» մատենաԵարով լույս է տեսել «Հայ սփյուռքը եւ դեսականազուրկ իժխանությունը. հավաքական ինֆունությունն անդրազգային 20-րդ դարում» անգլերեն ժողովածուն: Խմբագիրներն են **Դալար Շահինյանը, Սոսի Գասդարյանը** եւ **Յուլին Նալբանդյանը**, որոնք նաեւ ներածության հեղինակներն են: Գիրքը նվիրված է գիտական սփյուռքագիտության հիմնադիր իսչիկ Թյուլյանին:

Հասորը բաղկացած է ինը գլխից, որոնցում ընդգրկված են հիմնականում նոր սերդնի հեսազոտողների հողվածներ, որոնք են՝ **Բորիս Աճեմյանի** «Նսակյացների որոնումը. հայ սփյուռքի հայրենիներ Ադիս Աբեբայի, Երուսաղեմի, Վալանսի եւ Փարիզի միջոց», **Գեղամ Սուղնեյանի** «Հայ տեղահանվածներ. տեղահանությունից մինչեւ սփյուռք», **Նարե Գալսյանի** «Սփյուռք-Հայրենի հարաբերությունները վերանայվել են. սիրիահայի գործը Նիդեռլանդներում», **Հասմիկ Խալափյանի** «Սփյուռքի ինֆունության կռումը Եվրոպայի հայ դարբերական մամուլում», **Վահե Սահակյանի** «Անդրազգային ֆաղափականությունը եւ կառավարական ռազմավարությունները հեսցեղատադանական հայ սփյուռքի ձեւավորման տարիներին (1920-1930-ական թթ.)», **Լիլիթ Զեչեյանի** «Անդարկեոս հավասարություն. մժակութային ֆննադասությունները 20-րդ դարի վերջի սփյուռքահայ գրականության մեջ», **Զրիսոֆեր Շեյյանի** «Հայ առաքելական եկեղեցու դասարազային թեման. գաղթի վերջին այլիները», **Սիլվիա Ալաջաջիի** «Հնչող հայերենը. Սփյուռքի երաժժական երեւակայության ուրվագծերը», **Կարեն Զալլաթյանի** ««Դեմի Սփյուռք». Վահե Օժականի դոեզիայի կասարողական ուժերը», **Թալին Սուլյանի** «Հայերը Թուրքիայում. ինֆնավար մարդկանցից մինչեւ սփյուռք» եւ **Հակ Փափազյանի** «Արդյո՞ք դոլսահայերը սփյուռքահայեր են. բացելով հանրահայտ բանավեճը»: Հասորի վերջաբանների հեղինակներն են **Խաչիկ Թյուլյանը** եւ **Սեդուհ Ալանեանը**: Ա. Բ.



**Ստրեյթս թարգմանաբար ներկայացնում ենք շվեյցարական «Դեր բյունդ» թատերականի հոկտեմբերի 16-ի համարում Սարիաննե Սյուլեմանի «Ինչերի՞ կարող է դիմանալ մարդը եւ որքան ժամանակ. Բալետ զգացմունքների ուժի մասին. Պասկեռների շարժ` փայլուն թարային խմբով» հոդվածը, որ վերաբերում է Բեռնում ներկայացված «Զգացմունքների անասունի» թարային բեմադրությանը, որի հասվածներից մեկի բեմադրիչը երեւանցի սաղանդաւոս թարայի Ռինա Պիտոյանն է:**

Բեռնի ֆալաֆային թատրոնում կայացած եռամսս «Զգացմունքների անասունի» թարային բեմադրությունը վեր է հանում մեր խորհային զգացումները: Ներկայացման ընթացքում, առանց խոսքի, արծարծվում է երեք սրամարտություն, որոնցից երկուսը վախն ու զայրույթն են: Խոսքն այն վախին է զայրույթին չի վերաբերում, որոնք ունենում ենք արդի աշխարհի զարգացումների հանդեպ: Երեկոյի ընթացքում կան ներհանգող թատեր, որոնց ժամանակ գիտակցության մեջ փայլասակում են զուգորդող թատերեր: Եվ դա այդպես է, քանի որ այն գործողությունները, որոնք ցուցադրվում են բեմի վրա, լավագույնս են ընկալվում հանդիսատեսի կողմից: Երեկոն դառնում է ցնցող հենց այն բանի շնորհիվ, որ շոշափվում են ամբողջում ու զգացումը:


Հրավիրյալ թարայիներ **Սաուրո Ասուլֆին** եւ **Էթեն Բեւարը** Բեռնի Բալետի համար բազմիցս բեմադրել են ստեղծագործական հասվածներ, որոնցում շարժումների ընթացքում վախի (Ասուլֆի) եւ զայրույթի (Բեւար) հոյզեր են հորդում, որոնք առջայ գործողություններում կորցնում են իրենց հավասարակշռությունը եւ վերածվում արքայի: Ասուլֆին հենվում է թարային թատրոնի հիմունքների վրա: Նա «Վախի» համար գործողությունների վայր ընտրում է հանրակացարանային խոհանոցը: Տեսական լարված սոփոսանից հետո վարագույրի առջեւ սկսվում են թատերեր եռալ: Մի հավաքար սայլակով եւ ավելով փոփոխ է մաքրում, այնուհետեւ զբաղվում է սառնարանով: Զիչ անց անսոփոսելիորեն թարգ է դառնում, որ նա վարձու մարդաստան է: Սյուլեմի հիմունք

# Բալետ-եռերգություն

## Նաև Ռինա Պիտոյանի «Սերը» բեմադրությունը

ընկած է նոստալիկ հասնելու միջոց: Մինչ վճռորոշ թատեր, երբ բոլոր սոփոսաններն ի չիք են դառնում, իսկալցի թարայիքը թույլ է տալիս 10 թարողներին վայրի շարժումներ կիրառել: Նրանք վարդաթուրեմ կասարում են համարձակ եւ չափազանց մեծ ֆայլեր, սաստիկ կծկումներ, զոստմարտում են եւ զրկախառնվում: Այսպիսի թատերականացվածության մեջ սինիստրությունն ամենակարեւորն է: Ինչպես իր նախկին աշխատանքներում` Ասուլֆին բեմադրում է կասկադրական հնարներ եւ բուռն թարային տեսարաններ, որոնցում առարկաները` սեղան, աթոռներ, սոփա, տոբակներ, դառնում են զուգընկերներ: Սառնարանի խորհրդավոր բացվել-փակվելը հանրակնում է թարողների վերջույթների կամ գլուխների` լվացարանից դուրս բերելուն: Մամուկանաչ խոհանոցում վախը փոխվում է կասկեզության, նույնիսկ երբ լոգարանի վարագույրի հետեւում մահվան սարսափի մեջ աղաղակներ են լսվում: Այստեղ տեղին է հիշել Հիչկոկի «Պսիխոն»: Այս շնչակոսուր սարսափ տեսարանը թարայիները ներկայացնում է տեմոլով եւ ճգարսությամբ:

Չարանալիորեն լավ է կասարվել երաժշտության ընտրանու փոխադրումը արտահայտիչ թարային լեզվի: Բեռնի սիմֆոնիկ նվագախումբն ուկրաինացի դիրիժոր **Արսյոն Լոնգինովի** ղեկավարությամբ հրաշալի կերպով օժանդակում է թարողներին: Բեթովենը բեմում թարում է, անգամ եթե նա իր սիմֆոնիան թարի համար չի հորինել: Լոնգինովը, խմբի գլխավոր ղեկավարը եւ Բեռնի օպերայի գլխավոր դիրիժորի օգնականը, համարձակորեն միահյուսել է Բեթովենի 3-րդ, 5-րդ եւ 7-րդ, ինչպես նաեւ Գուսսակ Մալերի 2-րդ եւ 5-րդ սիմֆոնիաների առանձին հասվածները Գլյուկի եւ Փրստելի արտասովոր դրվագների հետ: Բեռնի սիմֆոնիկ նվագախումբը գործում է արիարար եւ ոչ մի ջանք չի խնայում: Կենդանի կասարումները կյանքի են կոչվում զունագեղ մենանվագով եւ բազմատեսակ գործիքավորմամբ: Երեկոյի ընթացքում երեք թարային բեմադրությունները վերածվում են միասնական եռերգության: Ներկայացման մեջ



դա արտահայտվում է զունավոր, վայելուչ զգեստներով (**Իրինա Շոթոցնիկովա**), նրբաճաշակ լուսավորությամբ (**Սարկո Պոլիկանսո, Զիսիան Աուֆերսթրոթ**) եւ բեմի տեսարանային բարձրացնող կահավորմամբ: Այն գրավիչ է դառնում նաեւ սրճա-դարչնագույնի, կանաչի եւ մոխրագույնի սվեդիկո երանգներով:

Էթեն Բեւարի բեմադրության մեջ ուրախությունը հոփս է ցնդում: «Զայրույթի» գործողությունները տեղի են ունենում մթին դժոխքում: Այն հիշեցնում է մի լաբորատորիա, որտեղից ազատում է չկա. մոռալ մի տեսարան: Այստեղ նախ ոչնչացվում են մարմնագույն թատերաներով ջարդված կերպարները, այնուհետեւ` զգացմունքային սահմանները: Ի՞նչպե՞ս, թարգմանում է, թունավոր շնչառությամբ մարդկային բուլդոզերներ են: Բարեբեք դաժնը մի ակնթարթում դառնում է գերեզմանատուն: Մասնակիցներն իրենց թարն ամենափայլուն կերպով են ներկայացնում: Բեւարը հմտորեն խաղարկում է հռետրական

այնպիսի միջոցներ, ինչպիսիք են բարկությունը կամ վերափոխանակությունը: Ինչերի՞ կարող է դիմանալ մարդը եւ որքան ժամանակ: Դա ներկայացվում է շարժվող թատերների արխայիկ արտահայտչականությամբ (**Ինդար Զարմոնա Վինաս** եւ **Սարի Իժիդա**): Այն ընթացքում, երբ նվագախմբի միջից մեղմ-մեղմադճոս հնչյուններ են հորդում, բեմի վրա ողջերի խոցելիությունը վերջնակետին է հասնում: «Մթնոլորտի փոփոխությունը» բերում է փրկություն, ավելին չի բացահայտվում:

Վերջին «Սեր» հասվածը «Վախի» եւ «Զայրույթի» հետ միասին Բեռնի Բալետի երկուսուկեսամյա ներկայացումը դարձնում է եռերգություն: Հայտնի թարուսույց **Ռինա Պիտոյանի** «Սեր» բեմադրությունն առաջին անգամ կարելի է տեսնել Բեռնում, որտեղ Բեթովենի եւ Մալերի երաժշտությունն ընդգծված միասնականության եւ արթնակվածության միմի-մալիսական թատերներ է ստեղծում: Թարային վեցյակը ներհին եւ արտաին ազատության փնտրումների մեջ է` ուղղված դեմոի Ես-ը եւ դեմոի Դու-ն: Այդ երկուսն էլ հայտնագործվում են որդես անծանոթ նոր տարածքներ: Ըստ Պիտոյանի` թարը մենակատարային է, անգամ երբ նա խումբ է ընդգրկում: Նա մենակատար-մենակատարուհիներին փայլուն դերերի միջով անցնել է տալիս` ոլորտային ճանապարհով դեմոի անծանոթ նոր տարածք: Կառուցվածներից, կաղաթարներից եւ տեղաշարժերից ծագում է վերացական գլուխկոսրուկ, որը հանգեցնում է զույգերի ձեւավորմանը: Բարձրացումներն ու աշխույժ թիրուսները խավարը վերածում են ճարձատյունի: Պիտոյանի «Սերը» գործում է առանց կաղաթարների: Այն թեթեւ է ընկալել որդես առավելագույն ազատության ընտրություն: Որդես ուժ, որն առանց բռնության (նաեւ առանց վախի ու զայրույթի) կաղաններ է փոփոխում: Բեռնի հանդիսատեսը երեկոյին իր շնորհակալությունը հայտնեց ռոդներ տեղը ծափահարությամբ:

Վերաներեկից թարգմանեց  
ՄԵԳԱ ՎԱՐԳՈՒՄՅԱՆԸ  
Լուսանկարը` Գրեգորի Բասարյանի

### Կինոդիտում

#### Կարլեն Միրզախանյանին նվիրված ֆիլմ` «Ակունք»

Դեկտեմբերի 22-ին, ժամը 18:00-ին, Հայաստանի կինոգործիչների միության փոփոխադրում (Հեռուստատեսության հասնական թատրոն, Վարդանանց փողոց 18) տեղի կունենա մշակույթի վաստակավոր գործիչ, դորժետոր **Կարլեն Ժիրայրի Միրզախանյանի** ծննդյան 100-ամյակին նվիրված «Ակունք» ֆիլմի հրատարակային առաջին ցուցադրությունը, կազմակերպությամբ Հայաստանի կինոգործիչների միության:



Ֆիլմի սցենարի հեղինակ` **Դիանա Մարկոսյան**, ռեժիսոր` **Արսյոն Աղասարյան**, օպերատոր` **Հրայր Միրզախանյան**, մոնտաժ` **Արթուր Փարսյան**:

Բացման խոսք` Միության նախագահ, ժողովրդական արտիստ, Եվրոպական կինոակադեմիայի ակադեմիկոս` **Հարություն Խաչատրյան**:

### Գյումրին 2024 թ. գծանկար բացիկներով օրացույցում

Արվեստաբան, գծանկարիչ, «Ազգ»-ի մեր հին գործընկեր **Լեւոն Լաճիկյանի** գծանկար բացիկաւերերը, որոնք արվեստով ներկայացնում են մեր ֆաղափների շնորհի, փողոցների ու հրատարակների, հայկական եկեղեցիների ճարտարապետական ու մյուս գեղեցկությունները, հետաքրքիրություն են առաջացրել հանրաթեսությունում եւ Սփյուռում: Արդեն երկրորդ տարին դրանց ավելանում է սեղանի գեղագարդ օրացույցը` Գյումրի ֆաղափի թատերերով:

Տեղիս «Օյունջյան» կրթահամալիրի «Վարդուհի» արվեստի դորոցում Լաճիկյանի 2024 թվականի «Գյումրի, իմ սեր» եռալեզու` հայերեն, ռուսերեն, անգլերեն օրացույցի շնորհանդեսն ընդամենը դրանով սահմանափակվող միջոցառում չէ: Այս դորոցը, ի թիվս ոլորտի այլ մասնակցությամբ, մի ուրույն օջախ է, որտեղ կերտվում է մեր աղագան` մշակույթով: Շնորհանդեսի հյուրերը հենց սկզբից հայտնվեցին մշակույթի, արվեստի համակող մթնոլորտում` ականատես լինելով դորոցի բալետի բաժնի սանուհիների (մասն թվում` արդեն նաեւ արցախցի երկու աղջնակների) թարադունումին ու երկու գեղեցիկ կասարումների, դիտելով կերպարվեստի բաժնի ցուցադրված գեղանկարները, ունկնդրելով մի ֆանի կասարումները երաժշտության բաժնի սաների, որոնց շարժում արդեն կային միջագույն մրցույթների դափնեկիրներ եւ անգամ բազմակի դափնեկիր:



2024 թվականի այս օրացույցը թարունակում է 12 գծանկար Լա-

ճիկյանի գյումրիաթատեսունից, ասույթներ «արվեստների մայրաքաղաքի» մասին, նաեւ տեղեկություններ ֆաղափի հյուրանոցային, սրճարանային, զրկավաճառ, սոփասարկման եւ այլ տարբեր հաստատությունների վերաբերյալ:

Մայրաքաղաքում եւ Գյումրիում առաջարկվող նրբարվեստ այս օրացույցը նաեւ ամանորյա լավ նվեր կարող է լինել միմյանց ու երկիր ժամանող հյուրերին:

ԱՆՆԱ ԱՐԱՄՅԱՆ

# Կայացել է «Էդուարդ Փափնյան-100» գիտաժողովը

Հայաստանի կոմյուղոզիստների միության դահլիճում կայացավ հայ երաժշտագիտության երախտավոր, ՀԽՍՀ արվեստի վասակավոր գործիչ, կոմյուղոզիստ, քեսաբան եւ մանկավարժ **Էդուարդ Փափնյանին** նվիրված գիտաժողովը: Այն կազմակերպվել էր ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի, Երեւանի Կոմիտասի անվան միջակարգ կոմպոզիտորիայի եւ Հայաստանի կոմյուղոզիստների միության նախաձեռնությամբ:

Իր բացման խոսքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի սփորտ, ՀՀ արվեստի վասակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, դոկտոր **Աննա Ասարյանը** նշեց, որ թեւէ Էդուարդ Փափնյանը երկար տարիներ դասավանդել է մեծ Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանում, սակայն նա հիմնական գիտամակարձակական գործունեությունը կադրված է Երեւանի Կոմիտասի միջակարգ կոմպոզիտորիայի հետ եւ իբրեւ բարձրագույն կրթության նվիրյալ՝ նա հեղինակել է երկու ռուս կարերու՝ «Հարմոնիայի» եւ «Պոլիֆոնիայի» դասագրքերը: «Առհասարակ, մանկավարժի մասին խոսելիս միշտ դուք էք իմանում, թե նա սաները հետագայում ինչ են հասել իրենց մասնագիտական կյանքում, եւ սլայդ մանկավարժի անմաքարծր գնահատականը հենց դա է: Այս առումով կարող եմ ասել, որ Էդուարդ Ռուբենովիչը, իսկապես, ռուս լուրջ հետ է թողել: Այսօր Երեւանի Կոմիտասի անվան միջակարգ կոմպոզիտորիայի երաժշտության ժողովրդի անբնական վարիչը՝ արվեստագիտության թեկնածու, դոկտոր **Ռուզաննա Ստեփանյանը**, հենց նա սանն է: Նրա սանն եմ նաեւ ես:

Այն գիտական մեթոդը, որ ես սովորել եմ Էդուարդ Ռուբենովիչից, մինչ այժմ էլ ինձ ռուս է օգնում: Նա սովորեցնում էր ինքնուրույն լսողության խորությունը, ոչ թե ընդհանուր մայրը ստեղծագործությունը՝ լինելով դա դաճանուրային մանրանվագ թե մեծակավ գործ, եւ այդ սկզբունքը միշտ ինձ հետ է: Եվ իմ մասնագիտական կյանքում իմ բոլոր հաջողությունների ու ձեռքբերումների համար ես երախտագրոր եմ իմ ուսուցիչին»:

Հայաստանի կոմյուղոզիստների միության նախագահ, ՀՀ արվեստի վասակավոր գործիչ, կոմյուղոզիստ **Արամ Սաթյանը** իր ողջունի խոսքում նշեց. «Ինձ համար ես սա կարեւոր միջոցառում է, քանի որ ես մտածեցի, որ սանն եմ եղել: Շատ հիշատակահարուցիչ է կադրված Էդուարդ Ռուբենովիչի հետ, բայց առաջին հերթին ես կուզեի խոսել իմ մարդկային կերպարի մասին: Ռոմանոս Մելիքյանի ուսումնարանի մեր կուրսում սովորողների տարիային տարբերությունը ռուս մեծ էր. կային ավելի ավագ տարեկիցներ եւ գրեթե քսանամյակով ավելի երիտասարդ սովորողներ: Ինչ-որ երեւել էր հետափրկություն եւ առաջացրել այդ անձը, որ իմը բերել էր ուսումնարան: Սկզբում այս տղաները փորձում էին խանգարել դասերը, բայց շուտով Փափնյանի եւ նրա մեթոդի, մեր կուրսը սկսեց անձամարտը գրել թելադրություն: Նա գտել էր մոտեցումը, ձեւը, որ հետագայում նաեւ իր ռուս ուսանողները կիրառեցին դասավանդման մեջ: Կարճ ժամանակում մեր ստանկան բաժինը սկսեց փայլել տարբեր մրցույթներում եւ միջոցառումներում:

Բացի հրատալի մանկավարժ լինելուց, նաեւ խոսող գիտնական էր: Նա ստեղծեց իր գերլադային սիստեմը. այն, անուշտ, կար, բայց սիստեմավորված էր, եւ ինքնաբերական դա հավաքել ու սիստեմավորել: Հետագայում մեր ռուս կոմյուղոզիստները սկսեցին ափսոսել՝ օգտագործելով այդ սիստեմը: Եթե վերցնեն մեր 20-րդ դարավերջի կոմյուղոզիստներին՝ Ջոհրաբյանին, Խրայեյանին եւ այլոց, գրեթե բոլորն ունեն այդ մոդալ մոտեցումը դեռի լադային կառուցվածք:

Կարելի է ռուս խոսել Էդ. Փափնյանի մասին, բայց ես կարծում եմ, որ այսօր այստեղ հավաքվել են մարդիկ, որոնք ոչ միայն կրթված եւ տարած են նրա գաղափարներով, այլեւ մարդիկ են, որ անբնական ջանքով կարող են Էդուարդ Փափնյանը: Եթե մարդը կարող է ամբողջությամբ չալ իր գիտելիքն ուսանողներին, ուրեմն նա բարձրակարգ դասատու է, եթե մարդը կարողանում է գիտահետազոտական առումով ինչ-որ բան նվիրել ժողովրդին՝ ուրեմն նա մեծ մարդ է, որը մտածում է ազգային արվեստի մասին»:

Ողջունի խոսքում հանդես եկավ նաեւ Երեւանի Կոմիտասի անվան միջակարգ կոմպոզիտորիայի գիտական գծով ղեկավար, արվեստագիտության թեկնածու, դոկտոր **Ճովհանն Եսայանը**: Նկատելով, որ այսօր բոլորիս կողմից մեծ ջանքեր եւ հոգեկան ադուններ են դադանդվում այս բարդ դայանաներում որեւէ տղ գրելը կան բարձ ասելը, նա շուրհակալական խոսք հղեց Աննա Ասարյանին եւ Արամ Սաթյանին այս հնարավորությունն ընդհանրելու համար: «Անհավասարի է, որ մեր ուսուցիչը, մեր դոկտորը հարյուր տարեկան է: Կարծես երեւ լինեւ, որ առաջին կուրսեցիներու ներկայացավ այդ ղաակառեւլի արտափուով, բարձրատաակ, հաղթանդամ, ահեղաձայն դասախոսը, որի հետ երջանկություն ունեցանք ճանաղարհ անցնելու ո՛չ միայն կոմպոզիտորիայում ուսանելու տարիներին, այլեւ տասնամյակներ անց, արդեն ողջես ավագ ու կրսեւ գործընկերներ: Առաջին իսկ ղղեներից իր գրավիչ անհատականությամբ, անբացատրելի հոգւր ներգործությամբ նա մեզ փոխանցեց հարմոնիայի դասընթացի հանդեղ հետափրկությունն ու վարակիչ ողետությունը: Մի կողմ թողնելով դոգմաիկ կարծաիղերը՝ նա խրախոսում էր համարձակ նորարարությունը եւ ստեղծագործա-



ստական մտքի տրոյթում եւ ողջես առանձին դասընթացներ իրենց հիմնավոր սեղն են գրաղեցնում կոմպոզիտորիայի կրթական ծրագրում եւ, որ անեմակարեւորն է, այսօր ունեն իրենց ուսուցիչն, իրենց դողաղեսին նվիրված նրա գործը շարունակողներ, որոնց շնորհիվ իր կենտունակությունն ու շարունակականությունն է հաստատուն փափնյանական դողողը»:

Բոսոնից հեռավար ձեւաչափով գիտաժողովի կազմակերղիչներին, մասնակիցներին ու հյուրերին ողջունեց Հայաստանի կոմյուղոզիստների միության արտատահմանյան հանձնախմբի համանախագահ, ՀՀ արվեստի վասակավոր գործիչ, կոմյուղոզիստ **Կոնստանտին Պետրոյանը**:

«Մեր բոլորիս համար թանկ է Էդուարդ Փափնյան անունը, ողջես հայ երաժշտագիտության մեջ գերլադային սիստեմի, «Հարմոնիայի» եւ «Պոլիֆոնիայի» դասագրքերի ստեղծող: Այս ներղումներն անգնահատելի են հայ երաժշտական արվեստի եւ երաժշտագիտության համար: Ողջես իր ուսանող, ես ուզում եմ ընդգծել նրա մեծ գիտելիքները, որ ողջես մանկավարժ անմաղորդ տալիս էր մեզ: Նա դասաղարակել է երաժշտագետներին եւ կոմյուղոզիստներին մի քանի սերունդ»:

Այնուհետեւ երաժշտագետ, Երեւանի Կոմիտասի անվան միջակարգ կոմպոզիտորիայի դոկտոր, Հայաստանի կոմյուղոզիստների միության անղամ, ՀՀ արվեստի վասակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, դոկտոր **Կարինե Զաղաղդանյանը** ներկայացրեց «Հուշեր Էդուարդ Փափնյան մանկավարժի, գիտնականի եւ անձին մասին», երաժշտագետ, Երեւանի կոմպոզիտորիայի երաժշտության տնութային անբնական վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոկտոր **Ռուզաննա Ստեփանյանը**՝ «Էդուարդ Փափնյանի ունիվերսալ գերլադային համակարգը եւ դրա նշանակությունը 20-րդ դարի երաժշտաեւսական համակարգերի համաեւտեսում», կոմյուղոզիստ, ՀՀ արվեստի վասակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, դոկտոր **Միխայիլ Կոկոեւը**՝ «Էդուարդ Ռուբենի Փափնյանի գերլադային համակարգի աղողիթները», երաժշտագետ, Երեւանի կոմպոզիտորիայի Գյունրու մասնաղյուղի Տեսական բաժնի վարիչ, դոկտոր **Ռիտա Աղայանը**՝ «Էդուարդ Փափնյանը գիտնական, մանկավարժ», երաժշտագետ, Երեւանի կոմպոզիտորիայի Գյունրու մասնաղյուղի դասախոս **Անահիտ Դարիբյանը**՝ «Էդուարդ Փափնյանի «Երկու դղեմ» դաճանաղարային մանրանվագները» եւ երաժշտագետ, Երեւանի կոմպոզիտորիայի երաժշտության տնութային անբնական դասախոս **Նառա Բաղդասարյանը**՝ «Վասակաւաւ մանկավարժը. Էդուարդ Փափնյան» թեմաներով ղելուցումները:

Գիտաժողովն ընդմիջվեց երաժշտական դողարով՝ հանրաղեսական եւ միջաղային մրցույթների դափնեկիր **Մարիաննա Հայրաղեսյանի** կատարմամբ հնչեցին Էդուարդ Փափնյանի մանրանվագները՝ «Պարղից բարդ» դաճանաղարային ողեսների ժողովաթուղթը:

կան աղասությունը, եւ դրանում մեծ նշանակություն ունեւ այն հանղամանը, որ նա նաեւ կոմյուղոզիստ էր: Փափնյանը երաժշտությունն ընկալում եւ մեկնաբանում էր «ներսից». նրա դասերն անցնում էին հետափրկական երկխոսությունների, ափտույծ մեանրկումների եւ դողաղես այդ դողին հնչող երաժշտության մասին մտերի փոխանակման ձեւով: Հենց այս անկեղծության, անմիջականության շնորհիվ երաժշտագետներին, կոմյուղոզիստներին, գործիղային կատարողներին ու դիրիղորներին քանի-քանի սերունդ իրենց ուսուցչի հանղեղ նվիրվածությամբ, դասկառամի ու երախտագիտության անկեղծ ղաղցումով, անթափույց հողարությամբ խոսողանում են, որ եղել են Էդուարդ Ռուբենի Փափնյանի սանը: Հսկայական է Էդուարդ Փափնյանի ներղումը նաեւ հայ երաժշտաեւսական մտքի ղարղացման գործում: Ռղերտ Աթայանի, Մարղարիտ Բրուղյանի, Նովալիս Դերղյանի եւ մյուների հետ միասին նա առաղինեղից էր, որ հեղինակեց «Հարմոնիայի» եւ «Պոլիֆոնիայի» հայաղեղու դասագրքերը: Ողջես խմբաղի մասնակեցեղ տարրական տնութային, վերղւծության դասագրքերի ստեղծմանը, որոնցում դողը եւ ղրաղես հայերեղով, մեակված տեմիմաբանությամբ շարղղված են երաժշտաեւսական կարեւողաղյուն հիմնաղղյուններ: Էդուարդ Փափնյան քեսաբանի խոսողաղյուն հայեմաղործությունը հայկական գերլադային ձայնակարղերի ուսումնմն էր, որի դողյունները համաղղրեն, կարելի է ասել, մղլեռանղղրեն դաճողանում էր Փափնյանը՝ հողթաղարելով ավանղական դասկերաղյունների իմերղիղայի կարծրաղիղային մեաղողության դիմաղղությունը: Այսօր արղեն, Փափնյանի գերլադային ձայնակարղերի հիմաղղյունները, հայ երաժշտության ձայնակարղերից թտող ուղույն հարմոնիկ լեղվամեաղողության վերաթերղաղ, կաղացած իղղղություն են հայ երաժշտա-

# «ԱՄՆ Պետքերը Եւրոպայում Եւ Անդրկովկասում ՌԴ ԱԳՆ-ի հետ խաղում հաղթել».

## Ֆորձագետ Միխայիլ Ալեքսանդրով

### ԳԵՂԱՍ ՄԿՐՏՉՅԱՆ



Տասխանազարկի տարվելու մասին: Տեղի ունեցան Ալիեւի ու Բլիսնեցիի հեռախոսազրույցը, ԱՄՆ դեսպարտի օգնականի այցը եւ այլն:

ԱՄՆ-ի ծանրակշիռ «փաստաթղթեր»՝ դատաւարական լուրերի եւ Ադրբեջանի բարձրաստիճանի դատաւարների, այդ թվում Ալիեւի նկատմամբ փրկական հետադարձում ստանալիս ձեռնարկը, ազդեցություն ունեցան Բաքուի վրա, ասում է ֆորձագետը: Եվ խաղաղ կարգավորման գործն անմիջապես տեղից բացվեց, դրանից հետո առաջ եկավ դեկտեմբերի 7-ի հայտարարությունը:

Ըստ նույն գնահատման, այժմ եթե կնքվի խաղաղության դաշինք, դա փոփոխություն կհանձնարի ԱՄՆ-ը, քանի որ հենց նա է Ալիեւին դատաւարելու հրահրվելու Զայասանի նկատմամբ հետագա ազդեցությանը: Եվ կարելի է, որ այդ դաշինքը կունենա զուտ իմիտացիոն բնույթ եւ ոչ մի կերպ չի երաշխավորի Զայասանի անվտանգությունը երկարաժամկետ հեռանկարում: Գլխավորն այն է, որ այն սլոյվ դաշինքը Զայասանում, քանի որ ՌԴ-ն ԱՄՆ-ի գործողությունների ֆոնին երեւում է իբրև Ադրբեջանի ձայնակիցը: Ադրբեջանին ֆինանսապես եւ որոշակի ստեղծված է դատաւարական լուրերից զրկելու համար: Դե, իսկ հետո ամերիկյան աջակցության գինը կլինի ռուս-հայկական դատաւարական համագործակցության խզումը եւ ռուսական ռազմաքաղաքական դուրսբերումը Զայասանից:

Իսկ ռուսաստանյան դիվանագիտությունը: Ինչպես է այն դիմագրավում ամերիկյան խաղին Անդրկովկասում: Կարծես թե ոչ մի կերպ, իր հարցին դատաւարականում է վերլուծաբանը: ՌԴ ԱԳՆ-ն շարունակում է անօգնական հայտարարություններ անել խաղաղության ու բարեկամության մասին, ամեն լավ բանի օգտին ու ամեն վատին դեմ, դիմել 2020 թ. նոյեմբերի 9-ի ուժը կորցրած եռակողմ հայտարարությանը, որը ոչ մեկը չի կատարում, ինչպես նաեւ շարունակում է ամեն ինչում մեղադրել Փաշինյանին եւ, ըստ երեւոյթին, ինչպես հաճախ է եղել նախկինում, ակնկալում է, որ ամեն ինչ ինչ-որ կերպ ինքն իրեն կկարգավորվի:

Եվ ինչո՞ւ զարմանալ ՌԴ ԱԳՆ-ի նման դատաւարական համար, երբ իր աշխատանքում այն հենվում է ադապտացիոն փորձագետների վերլուծությունների վրա, որոնք վատ են հասկանում Անդրկովկասի իրողությունները եւ, հետևաբար, հուսահատեցնող գնահատականներ ու եզրակացություններ են մատուցում, իսկ երբեմն էլ՝ դատաւարական ֆանտաստիկներ, ասում է Միխայիլ Ալեքսանդրով:

Ռուսաստանի իշխանությունների խաղաղույթը Ադրբեջանի վրա՝ հիմք ընդունելով ՌԴ ԱԳՆ դատաւարական ավագ խորհրդական Ա. Անանյանի նման փորձագետների առաջարկությունները, ի

սկզբանե դատաւարական էր ձախողման, կարծում է նա: Բացի այսուհետեւան անուստանեստական օգուսներից (ԵՄ անուստան), դա ոչինչ չբերեց: Ալիեւը հստակ ցույց է սպել, որ մտադիր է լսել ոչ թե Ռուսաստանին, այլ ԱՄՆ-ին: Բաքուի շահագրգռվածությունը Մոսկվայի բարեկամության վերաբերմունքի նկատմամբ Լեռնային Ղարաբաղի բռնակցումից հետո ձգտում է զրոյի: Անվտանգության տեսակետից Ադրբեջանն ունի հուսալի դաշինակից ի դեմս Թուրքիայի, որը սեր կկանգնի նրան, այդ թվում՝ ռազմական ճանապարհով: Տնտեսական տեսանկյունից Ռուսաստանն ու Ադրբեջանը մրցակիցներ են, ոչ թե գործընկերներ: Բաքուն շահագրգռված է ընդլայնել իր նավթի եւ գազի վաճառքը արեւմտյան շուկաներում, ինչպես նաեւ դառնալ Զինաստանից ու Կենտրոնական Ասիայից Եվրոպա աղբյուրների արտահանման արանցիկ կետ: Ուստի Ադրբեջանը ԵՄ ավելի շահագրգռված է զարգացնել հարաբերությունները Արեւմուտքի, քան Ռուսաստանի հետ:

Ռուսաստանում Բաքուի միակ կարելու շահագրգռվածությունը, ինչպես նշվում է, ադրբեջանական սիտուացիոն բիզնեսն է: Բայց եթե դա դեմ է կենտրոնի մտադիր, ադա ռազմավարական առումով Արեւմուտքի հետ հարաբերություններն ակնհայտորեն կօտարակոչեն: Սրանից բխում է մի դարձ եզրակացություն, որը ՌԴ ԱԳՆ-ն չի կարող կամ չի ուզում հասկանալ: Ադրբեջանը Ռուսաստանի դաշնակիցը չէ եւ երբեք չի լինի՝ ինչ համաձայն փաստաթղթեր էլ որ նա Մոսկվայի հետ ստորագրի:

Մյուս կողմից, նկատում է ֆորձագետը, Զայասանն է միտք եղել ու կարող է մնալ Անդրկովկասում Ռուսաստանի հուսալի դաշնակիցը, եթե ռուսաստանյան դիվանագիտությունը ձեռնարկի մի քանի վաճառական փայլեր, որոնք կխափանեն սարածաճաշանում ամերիկյան խաղը:

Զրադարակայնորեն հաստատել Զայասանի անբողջականության ճանաչումը Զայակական ԽՍՀՄ սահմաններում, ցուցադրել ԽՍՀՄ Գլխավոր ԵՏԻՄ վերջին ֆառեգը Զայասանի սահմաններով եւ հայտարարել, որ դրանք դեմ է ընկած լինեն սահմանազատման բանակցությունների հիմքում: Զրադարակայնորեն հաստատել Զայասանի անվտանգության երաշխիքները, ընդգծելով, որ նրա սահմանները Ռուսաստանը կդատաւարանի ռազմական ճանապարհով: Վերականգնել ռուսական զենքի եւ ռազմական տեխնոլոգիաների մատակարարումը Զայասանին: Ադրբեջանից դատաւարելու դադարեցնել 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրոյթները խախտելը, դուրս բերել իր գործերը Ղարաբաղում ռուսական խաղաղապահ զորախմբի վերահսկողության գոտուց, որդեսգի ադա հովվի հայ փախսականների իրենց սներ անվտանգ ու արժանադատի վերադարձը: Այս եւ իր նշած այլ փայլերը, Միխայիլ Ալեքսանդրովի կարծիքով, զուցե կարողանային իրադրեւ փոխել նաեւ հասարակական տրամադրությունները Զայասանում:

Միայն թե փորձագետը վստահ չէ, որ ՌԴ ԱԳՆ-ն ընդունակ է նման փայլերի: «Ձանի դեռ մեզ մոտ արտաքին ֆաղափականությունը թելադրում են նավթի ու գազի արտահանումները, մենք մոտադրեւ դատաւարելու ենք», - եզրափակում է նա:

### Իմաստաբանական բառարան

### Փոխվում են ժամանակները...



Ժամանակի հետ փոխվում է ամեն ինչ: Փոխվում է ճաշակը, բնավորությունը, բարեկամը, դաշնակիցը, աշխարհափառական վեկտորը: Փոխվում են իշխանություններն ու ինֆրիշխանության ասիճանը:

Ժամանակի հետ փոխվում են նաեւ մեք. մերք մեր ձայնը արաւ ենք սրան, մերք՝ նրան: Մերք ընտրում ենք այս ճամբարը, մերք՝ ավելի հարմարավետ թվացող մեկ ուրիշ ճամբար:

Եվ այս հարափոփոխ կյանքում փոխվում են նաեւ իրականությունն արտացոլող բառիմաստներն ու անձնանունները:

Օրինակ, եթե նախկինների օրոք ուսուցչի մասնագիտությունն էր ամենավարկանիւշայինը, այսօր ամենահարգի մասնագիտությունը դարձել է դատաւարական արտաքինը:

Եթե միջնադարյան Զայասանում ազնվական տոհմի ներկայացուցչին էին ՆԱԽԱՐԱՐ ասում, ադա այսօր ՆԱԽԱՐԱՐ ենք անվանում այն անձին, ում ազնվական լինելու հասկանիւշը դատաւարչ է, սակայն ազնվությունն ստուգելու համար դատաւարչի դաշնակցին է նրա եկամուտների ու գույքի հայտարարագրումը:

Եթե նախկինում իշխաններ էին կոչվում միավորված Զայասանի անկախ կառավարչներն ու ժառանգաբար կալվածները սեր դարձած սանուսերերը, ադա այսօր **ԻՇԽԱՆ** կարող է կոչվել նաեւ իշխանական եւ ոչ իշխանական ճամբարների միջեւ երբեւեկող դատաւարականը:

Եթե սերթողիկյան Երջանում ամենագետ մարդու հռչակ վայելող անձին էին ՎԱՐԺԱՊԵՏ ասում, ադա այսօր գիտելիքներից ու մանկավարժական հմտությունից զուրկ ուսուցչին են հեզմաբար ՎԱՐԺԱՊԵՏ (խնդրում են ձիւտ կարդալ) կոչում:

Եթե հին օրերի ՊՈՂՈՍԸ հելլենական մեակույթի ազդեցությունը կրող հրեական արմատներով տարտնացի Պողոսն էր, ադա մեր օրերի ժեխական արմատներով ՊՈՂՈՍԸ նախկիններից միայն **Սերժին** մերժած հայաստանցին է:


Եթե երբեմնի **ՊԵՏՐՈՍԸ** տասներկու առաքյալներից միայն **Քրիստոսին** ուրացած սուրբ Պետրոսն էր, ադա մեր օրերի ՊԵՏՐՈՍԸ բոլոր նախկիններից ծառայած եւ միեւնոյն ժամանակ բոլորին ուրացած երեւանցին է:



# Արժեքավոր գիրք Անիի մասին

## ԲԱԲԿԵՆ ՍԻՍՈՆՅԱՆ

